պարարտ հողերով, արօտավայրերով և այգիներով։ Գիւղի հիմք գցողները գաղթել են Վերին-Խոյգանից, Բոլորանից և Խունկից 250 տարի առաջ. նրանք միջահասակ են ու հիւրասէր և պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ։ Այժմ գիւղն ունի 80 տուն՝ 687 շնչով, որից 370-ը արական է և 317-ը իգական։

Հողը «խալէսէ»—արքունական է. պատկանում է Քօսրքաբէ-Ցօվլէ հանրմին՝ Շահզադէի կնոջը. բերքի $^1/_3$ մասը հողատիրոջն է. հողազուրկները մօտաւորապէս տարեկան 225 խալվար ցորեն և գարի տալիս են հողատիրոջ և 225 թումման էլ փող իբրև պետական հարկ։ Հողը վարում են արօրով, որ մեծ մասամբ ջրովի է։

Գիւղում կայ Ս Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին և մի գպրոց, ուր սովորում են մօտ 20 աշակերտ-աշակերտուհիներ մի ուսուցչով։

Ինչպէս միւս գիւղերը, այնպէս էլ Հադանը լօռական ասպատակութիւնների ասպարէզ է դարձած. սիստեմատիկ հարստահարութիւններն այստեղ այնպիսի չափերի են հասել, որ հէնց այս տարի (1918 թւին) շատ հայեր սովից թողել են իրենց տները և գաղթել Փէրիայի զանազան հայաբնակ գիւղերը։

— Վարժապետ ջան, — դարձաւ ինձ գիւղի Տէր-Գրիգոր քահանան,—ես իմ ձեռովը սովծութենէ 100 հոգի թաղեցի։

Այստեղ առաջ եմ բերում մի քանի օրինակներ, գաղափար տալու համար Քեզ, թէ գիւղն ինչպէս է հարստահարել.

1916 թւին Սալար-Մասուդը զինուած ձիաւոր խմբով մտնելով գիւղ՝ առնում է 800 թումման. դրանից մի ամիս անց 8—10 ձիաւորով գալիս է Ասլան խանը և գիւղացիների հաշուով ուղիղ չորս ամիս ապրում գիւղում. հեռանալիս առնում է 100 թումման և 400 հատ էլ ոչխար։ Այնուհետև գալիս է Միրզա-Աբասալ-Վահաբ խանը. սա առնում է 90 թումման և հինգ խալվար ցորեն։ Ապա Սալար-Մասուդի մարդիկը՝ թուով տասն և հինգ հոգի մտնում են գիւղ և